Հաստատում եմ
Վարդենիսի բժշկա-հումանիտար
Քոլեջի տնօրեն՝ Ն. Գասպարյան

ԿԱՐԳ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ

Ուսանողը իրավունք ունի բողոք ներկայացնել քոլեջի ուսումնական գործընթացի հրամանների, կարգադրությունների եւ այլ խնդիրների վերաբերյալ, որոնք սահմանափակում կամ խախտում են ուսանողի իրավունքը: Քոլեջի ղեկավարությունը քննարկում է ուսանողի պահանջը համապատասխան ՀՀ օրենսդրական, ենթաօրենսդրական նորմերի եւ քոլեջի կանոնակարգի: Ուսանողը բողոքը կարող է ներկայացնել գրավոր կամ բանավոր ձեւով:

Բողոքի ներկայացման ժամկետները սահմանափակված չեն: Գրավոր բողոքը պարտադիր կարգով պետք է ստորագրված լինի: Բողոքի դիտարկման ժամկետը 1 ամիս է: Առանձին դեպքերում, երբ կա անհրաժեշտություն հավելյալ ստուգումների բողոքի դիտարկման ժամկետը քոլեջի տնօրենի հրամանով կարող է երկարաձգվել եւս 1 ամսով: Դիմում-բողոքների դիտարկումը կարող է լինել վարչական եւ դատական կարգով: Բոլոր այն դեպքերը, երբ խախտվել է օրենքը, ուսանողի քաղաքացիական իրավունքները եւ քոլեջի սահմաններում եւ խնդիրը չի ստանում ուսանողին բավարարող լուծում, ուսանողը իրավունք ունի գանգատվել դատական կարգով: Դիմում բողոքի լուծման վերաբերյալ քոլեջի ղեկավարությունը պարտավոր է գրավոր կերպով հայտնել ուսանողին դիմումը ներկայացնելու օրվանից ոչ ուշ քան 30 օրվա ընթացքում: